

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԿԱԾՄԿՆԵՐ

Ա. Ահարոնեանի երկերը.

Թէև հայր ապիկար է ազգալին-հասարակական խնդիրներում, հայ հարուստը ժլատ է ընդհանուրի օգտին որ և է զոհաբերութիւն անելիս և շուալ իւր անձնական հաճուքների համար, եսական ու կեղծաւոր է հայ ինտելիգենտը. սակայն դարձեալ ընդհանուր բնաւորութիւն ունեցող հարցերը միշտ յայտնի չափով գրաւել են հայի ուշադրութիւնը և ոչ ոք անմասնակից չէ մնացել այդ հարցերին: Վերջին քառորդ դարում հայ հասարակութեան ուշադրութիւնը գլխաւորապէս գրաւել էր և շարունակում է գրաւել Բերլինի դաշնադրութեամբ լուս աշխարհ դուրս եկած հայկական խնդիրը, որ այնքան աղետարեր հետեանքներ ունեցաւ մեր տաճկահայ եղբայրների համար: Խնդիրը ի հարկէ ինքը ծագեց կեանքի էական կարիքից և շատ բնական էր այդ հարցի արտալայտութիւնը: Յետագայ զարգացումը այդ խնդրի և քաղաքական անբարեպատեհ հանգամանքները միացած մեր գործունէութեան մէջ տեղի ունեցած սխալների հետ ստեղծեցին այն թշուառութիւնները, որ հայկական կոտորածների անուն են կրում: Տաճիկ կառավարութիւնը յղացաւ մի տմարդի և միանգամայն իւր շահերին էլ վնասակար գաղափար - կոտորել իւր հայ հպատակներին նրանց թիւը պակասեցնելու դիտմամբ, որպէս զի հայկական խնդիր այլ ևս չլինի: Հետեանքները ի հարկէ չարդարացրին տաճիկի ձգտումները, ժամանակաւորապէս միայն, այն էլ քաղաքական յաջող կոմբինացիաների շնորհիւ, խնդիրը յետաձգուեցաւ պակարում աւելի զօրեղ կերպով երևան գալու համար:

Տաճիկը մոռացաւ, որ ալժմ արդէն անկարելի է Ներով-
գէսի ժամանակների միջոցներով երկիր կառավարել: Նե-
տեանքը աղետաբեր եղաւ թէ անմեղ ժողովրդի հա-
մար և թէ նոյն իսկ տաճիկ կառավարութեան համար,
որ այսօր այլ ևս չէ կարող առանց որ և է ուրիշ պե-
տութեան հովանաւորութեան ապրել: Իսկ երկիրը ա-
ւերեց և անմիտ գազանութիւնների զոհ գնացին հո-
րիւր հաղարաւոր խաղաղ և անմեղ հպատակներ, որոնց
տեղը այսօր վաղը գերմանացիք կամ ուրիշները պիտի
բռնեն, եթէ տաճիկ կառավարութիւնը օր առաջ չի-
բագործի հաստատ ըէֆօրմներ: Հայկական կոտորածնե-
րի սարսափը տարածուեց աշխարհի բոլոր կողմերը, բո-
լոր եւրոպական մամուլը արձանագրեց բազմաչարչար
հայի գլխին եկած արհաւերքը: Բնական չէ ուրեմն, որ
մեր մամուլը և գրականութիւնն էլ արձագանք տուեց
հայրենի երկրին հասած աղէտներին: Վերջին տարուալ
ընթացքում տեղի ունեցած վերջին կոտորածները և ա-
ռիթ տուեցին գաղթականութեան նոր հոսանքի, որի
մի տուտը ոչ միայն մեր երկիրը մտաւ, այլ և Ամերի-
կա մտաւ: Ա.հա այս գաղթականութեան զոհերի կրած
տառապանքների և թշուառութիւնների երգիչն է հան-
դիսանում Ա.հարոնեանը, որի գրուածներին մենք կա-
մենում ենք մի քանի անաչառ տողեր նուիրել: Դեռ Ա.
հարոնեանը շատ երիտասարդ է իրըև զրող և գեռ շատ
ժամանակ կայ նրան մանրամասն քննադատութեան են-
թարկելու: Առ ալժմ մենք կամենում ենք միայն ընդ-
հանուր գծերով ընորոշել նրա երկիրը և ցոյց տալ նրա
թերութիւնները, որոնք կարող են ապագալում կորստա-
բեր լինել նրա տաղանդի համար, եթէ լուրջ ուշադ-
րութեան չարժանանան հեղինակի կողմից: Ա.հարոնեա-
նի բոլոր գրուածները երկու մասի կարելի է բաժանել:
Մի քանի պատկերները վերաբերում են մեր երկիրը
գաղթած թշուառների վիճակին և նրանց կրած տա-
ռապանքների մասին են խօսում, իսկ միւս մասը բուն
երկրում կատարուած աւերմունքների մասին գրուած-
ներ են: Մենք, դիտմամբ չենք ասում, որ Ա.հարոնեա-
նի գրուածները գաղթականների կեանքի լիակատար
պատկերներ են կամ բուն երկրում կատարուած աւեր-

մունքների հարուստ գիտողութիւններ։ Գաղթականների մասին գրածներն են «Իւարձը», «Նորածինը», «Քալագուրդունի», «Պուտ մը կաթ», «Փշուր ըմխաց», «Բաշօն», իսկ բուն երկրի մէջ տեղի ուննցած անցքերին են վերաբերում «Հարևանները», «Ռաշիդը», «Աքալաղը», «Ձնդանում», «Սև օրեր», «Խաւարես լուսին» և «Իւարաւոր կաղնին»։ — Նախ քսն հեղինակի երկերի բովանդակութեան մասին խօսելը՝ աւելորդ չի լինի մի քանի տարբական հասկացողութիւններ յիշել գեղարուեստական գրականութեան մասին։ Վէպը կամ բանաստեղծութիւնը նկարագրում է մարդկային կեանքի, բնաւորութեան, զգացմունքների ու մաքերի պատկերը։ Որքան պարզ, որքան լիակատար և որքան բազմակողմանի և ճշգրիտ է հեղինակի նկարագիրը—այնքան զօրեղ է նրա ազդեցութիւնը և այնքան մեծ է նրա երկերի արժեքը։ Մասնաւորապես քնարերգու-բանաստեղծը, լերիկը, զգացմունքների արտայալուի է և որքան խորն է թափանցում նա իւր երգերով ընթերցողի հոգին՝ և նրա մէջ զարթեցնում իւր կրած խոհերը և վրդովմունքները այնքան էլ նա տաղանդաւոր է։

Գալով մեր հեղինակի երկերին՝ շատ դժուար է որոշել նրանց ընդհանուր բնաւորութիւնը։ Նրանք ոչ վէպեր են և ոչ քնարերգութիւն։ Աւելի զուտ Ա.Հարոնեանը պրոզայով երգեր է գրում, զգացմունքներ է արծարծում։ Կեանքի պատկեր, բնաւորութեան նկարագիր, հոգեբանական էտիւդ կամ զգացմունքների վերլուծում չկալ նրա գրածների մէջ։ Մի կողմից կեանքի կտորներ, դէպքեր, միջնագէպեր, զգացմունքների ալիքներ, իսկ միւս կողմից երևակալութիւն, հնարովի և չտափանցրած և շատ անգամ էլ անբնական կամ անհաւանական դրութիւններ և առասպելախառն փաստեր։

Հեղինակի առաջին շրջանի գրածները, երբոր նա անձամբ ականատես է եղել գաղթականների կեանքին և նրանց պատմութիւնների թարմ տպաւորութեան տակ է եղել, կրում են իսկական բանաստեղծութեան կնիք, նրանք աւելի կենդանի պատկերների, աւելի պարզ գրուած և զգացուած երգերի տպաւորութիւն են անում։

Ալսպէս օրինակ՝ «Պատկերներ» վերնագիր ունեցող հատորը համարեա ամբողջապէս աւելի բնական պատկերներ են, նրանցից աւելի կետնքի հոտ է գալիս քան թէ յետագայ գրուածներից, որոնք արդէն ֆանտազիայի արգասիքներ են և աւելի հէքիաթի բնաւորութիւն են կը ում և առասպելի տպաւորութիւն անում։ Առաջին հատորի մէջ հետևեալ անբնական կտորներն ենք նկատում, որ գեղարուեստի տեսակէտից անախորժ տպաւորութիւն է գործում։ «Հարեւաններ» յօդուածի բովանդակութիւնից իմանում ենք, որ մի անլաւտ գիւղում, որի ոչ տեղը և ոչ նկարագիրը կայ, բայց ի հարկէ, պէտք է ենթադրել, որ անցքը պատահում է Տաճկաստանում, ապրում էին երկու բարեկամներ - Մարտոն և Յովակը։ Սրանցից առաջինը սաստիկ չէր սիրում քըրդերին, իսկ երկրորդը շատ բարեկամ էր քըրդերի հետ և այս մասին երկու բարեկամ գիւղացիք միշտ վիճում էին։ Յովակը մինչև անգամ միշտ բժշկութիւններ էր անում քըրդերի մէջ, որովհետև լաւ «սընդի» էր և հմտութեամբ բժշկում էր մարմնի կոտրված և զարդուած վէրքերը։ Մի անգամ Յովակի մի բարեկամ քուրդի, Ուզգօյի ոտը կոտրում է և նա ամբողջ քառասուն օր գալիս է պարկում Յովակի տանը և վերջինս նրան խնտմում է և բժշկում։ Այս միջնադէպի ժամանակ Մարտոն շատ բժշկում է իւր բարեկամի վրայ, որ նա քուրդ Ուզգօյի համար իւր գործից անգամ յետ է ընկնում և սակաւ է պատահում Յովակին։ Երբոք Ուզգօյն բժշկում է և գնում՝ արդէն աշունքը վերջանալու վըրալ է լինում և խեղճ Յովակը ուշացած է լինում և շտապում է իւր տրաը զարելու։ Մարտոն էլ տուանց իմաց տալու բարեկամին իւր երկու եզների հետ գնում է Յովակին օգնութեան և երկու բարեկամները սկսում են վարել հողը։ Ալսօր էլ նրանց մէջ տեղի է ունենում սովորոկան վէճը քըրդերի մասին և ահա Մարտոյի ասածները պիտի արդարանան։ Հազիւ տռողջացած Ուզգոյն իւր երկու ուրիշ ընկերների հետ գալիս է Յովակի և Մարտոյի եզները խլելու՝ պատճառաբանելով որ Սամբօլից հրաման է եկել հայերին կողոպտելու և միւնոյն է մէկը պիտի տանի Յովակի եզները։ Բայց

ալս չէ կատաղեցնում Յովակին, որ իրենից բարերարուած քուրդը այդպիսի տմարդութիւն է անում, այլ ալն, որ Ուզգգոն ուզում է տանել և Մարտոյի եզները։ Յովակը սպանում է Ուզգգօյին, իսկ նրա ընկեր քուրդը Յովակին է սպանում և եղները տանում, իսկ Մարտոն Յովակի դիակը իւր մէջքի վրայ բերում է գիւղը։ Եթէ պատկերի նպատակն է կոտորածների և կողոպուտների ընդհանուր գոյնը և պատճառների նկարագիրը—այն ժամանակ ոչինչ կարիք չկայ, որ կողոպտող քիւրդը հայից բարերարուած Ուզգգօն լինէր, և այն էլ նրա «քիրվան» որ այսուամենայիւ անհաւանական է։ Ալսպիսի քիւրդ կարող է ի հարկէ լինել, բայց ոչ իբրև քիւրդի տիպ, այլ բացառութիւն։ Յովակի եղները կարող էր և մի ուրիշ քիւրդ տանել և պատկերը ոչինչ չէր կորցնի, այլ ընդհակառակը աւելի բնական կլինէր և հեղինակի սիրած Մարտոյի ատելութիւնը դէպի քիւրդը գարձեալ արդարացած կլինէր։ Սա պատկերի տպառութիւնը ոչ թէ զօրեղացնում է, այլ թուլացնում է։ «Նորածին» պատկերի մէջ, ուր նկարագրուում մի գիւղի փախուստ դէպի Ուուսաստանի սահմանները, գաղթականներին հալածում է քրդերի հրոսակը, ուստի նրանք շտապով աշխատում են բարձրանալ սահմանակից լերան գագաթը, բայց նրանց մէջ մի կին երկունքով բռնւում է։ Նրան շրջապատում են և օգնում ծնելու։ Սակայն հալածող քրդերի մօտենալը այնքան շփոթեցնում է նրանց, որ գլխիկոր փախչում են տանելով իրանց հետ ծննդկանին, բայց նորածին մանուկին մոռանում են խոտերի մէջ, իսկ երբոր առաւտոց գալիս են երեխալին գտնելու՝ նա արդէն մեռած է լինում։ Ուրքան կարճ կեանք, բայց և որքան թշուտու ասում է ըոմանտիկ բանաստեղծը արկածը պատմող գաղթականի բերանով։ Որ ընդհանուր արհաւերքի ժամանակ երեխաներ կարող են մեռնել - սա շատ բնական է, բոլորովին կարիք չկար նրան մոռանալու, մանուկը հէնց մօր ձեռքերին ցրտից էլ կարող էր մեռնել։ «Բաշօն» պատկերի մէջ նկարագրած է մի գաղթական Ղըզըսն, որ Ուուսաստանում մի քրդի ձեռքին տեսնում է իրանից կողոպտած Բաշօն անունով եղը և նրա թումօն լալով բըռ-

նում է իւր սիրած «Բաշօնին», բայց քիւրդը չի տալիս, իսկ Ղըզրօն յարձակում է քրդի վրայ և կոկորդից բըռ-նում ու խեղդում։ Այս յանցանքի համար նրան բանտ են տանում, իսկ Թումօն մնում է արտասուքը աշքե-րին բանտի դրանը նստած։ Այս Ղըզրօյի պատմութեան մէջ հետեւեալ կտորը մանկական կամ հիւանդ երեա-կայութեան արգասիք է և գեղարուեստական տակտի կատարեալ բացակայութիւն է մազացուցանում։ Ղըզրօն մի որսորդ գիւղացի էր։ Մի անդամ քրդերը սպանել էին գաշտում նրա որդուն, որի փոխարէն նա երկար թափառելուց յետոյ գտնում է իւր թշնամի քրդին, սպանում է նրան և արիւնից մի բուռը խնում։ Նրա բացակայութեան ժամանակ քրդերը յարձակում են նրա տան վրայ և տանում են նրա աղջկան և հարսին։ Իւր ընտանեկան պատիւը վերականգնելու ոչ մի հնար չի գտնում Ղըզրօն, սւստի երբոր գտնում է քրդերի մէջ իւր հարսին և աղջկան՝ նրանց իւր ձեռքով սպա-նում է և վերտգառնում գիւղը ու իւր բոլոր ունեցած չունեցածը ժողովում է թոնրի մէջ վառում և մանուկ Թումօյի ձեռքից բռնած գաղթում է հալրենի երկրից։ Ի՞նչ է այս Ղըզրօն, դիւցազն թէ գազան – եթէ ուշադ-րութեամբ քննելու լինինք այս պատկերը՝ կամալ-ակա-մալ դիտելու ենք, որ բանաստեղծական տակտի բա-ցակայութիւնն է, որ փշացնում է շատ յաջող վերցրած սիւժէտի տպաւորութիւնը։ Շատ բնական է, որ քիւր-դը սահմանակից գաւառում թալանած մի եզ էր առել, որ բերել էր շուկայ ծախելու և արստեղ գաղթական երեխան լացով ճանաչում է իրենց Բաշօնին։ Այս տե-սարանը ինքն ըստ ինքեան շատ բաւական էր ցանկա-լի նպատակին հասնելու, յայտնի համակրութիւն գէ-պի թշուառ գաղթականը զարթեցնելու համար։

Բոլորովին աւելորդ էր նոյնպէս Ղըզրօյին բանտ ուղարկելը։ Այս պատկերի վրայ մենք աւելի կ ոնդ ա-ռանք, որովհետեւ սա Ահարոնեանի սիրուն առակներից մէկն է։ Բացառիկ դրութիւնների, անբնական դէպքե-րի և եղեռնագործութիւնների կարծես օիրահար է մեր բանաստեղծը։ «Ձնդանում» ասած պատմութեան մէջ հեղինակի ծանօթ ներսէսը առարկում է նրան իւր բան-

տարկութեան մասին, որ ի հարկէ հայկակւն խնդրի հետ կապ ունի: Եատ հետաքրքրական կլինէր ի հարկէ, եթէ հեղինակի բարեկամ ներսէսը պարզ, հասարակ և անկեղծ կերպով պատմէր իւր գլխի եկածը, տաճկական բանտերի և դատավարութեան ձևերը և կարգ ու արքը, իւր բանտարկութեան հանգամանքները և այլն և այլն: Բայց այս բոլորը բացակալում են: Առանց որ և է կարիքի և բալորովին պատկերի գաղափարի և պատկերի ընդհանուր ընթացքի հետոչ մի կապ չունեցող մի արկած բոլորովին ահա փշացնում է և նսեմացնում գրուածքի արժէքը: Բանտում ներսէսը ծանօթանում է մի լոյն բանտարկեալի հետ: Այս լոյն Միխալօն բարեկամանում է ներսէսի հետ և նրանից մի դանակ է խնդրում: Ներսէսը դանակը առնել է տալիս և ընծալում բարեկամին: Միխալօն իմանում է, որ այն դաւաճանը, որ իւր եղբօրը ևս բանտ նստեցնելու պատճառ էր դարձել, բանտ է ընկել և վերևսի լարկում է նստեցրած: Ահա մի գիշեր Միխալօն դանակը ձեռքին բարձրանում է իւր թըշ: Նամուն սպանելու, բայց սխալմամբ սպանում է իւր եղբօրը որ նոյնպէս ալդտեղ էր բանտարկուած: Այս ինչ սէր է դէպի եղեռնագործութիւնը, ինչի համար է այս պատմութիւնը: Կեանքում անբնական դիպուածներ, սխալ սպանութիւններ, փալքենի և անմիտ գործողութիւններ միջիօնաւոր անգամ կարող են տեղի ունենալ, բայց առանց որ և է գաղափարի, առանց որ և է նպատակի և առանց որևէ լարաբերութեան երկի գլխաւոր մտքի կամ նկարագրութեան հետ՝ այսպիսի դէպքերը գրուածքի մէջ խոթելը ոչ մի նշանակութիւն չունի: Սաստիկ շափազանցութիւնը նոյնպէս Ահարոնեանի յատկութիւններից մէկն է: Երկու պատճառով շարիքի շափազանցութիւնը վնասակար է, եթէ մինչև անգամ կեանքում և պատահում է ծալրահեղ չարիք: Նախ որովհետեւ հոգեբանական օրէնքով օրինակը վարակիչ է և հետեւբար չափազանցրած չարիքի նկարագրութիւնը ստեղծում է ընթերցողի մէջ ամեն բան մուտք կերպով տեսնելու տրամադրութիւն և յուետես հայեացք կեանքի մասին և երկրորդ որովհետեւ չափազանցութիւնը գրականութեան մէջ նոյնն է, ինչոր սուտը կեանքի մէջ: Որպէս

սուտը անդուրեկան է և մարդկալին հոգին փչացնող ախտ, նոյնպէս սաստիկ զարգացած գրականական երեւակալութիւնը, որ բնականութեան սահմանից անցնում է կամ բացառիկ երևոլիթներ է նկարագրում, փչացնող է և վնասակար ամեն տեսակէտով:

Ահա թէ ինչու գեղարուեստական գրականութեան մէջ երեւակալութիւնը այն չափով է թանկագին ձիրք, որքան որ նա տիպական երևոլիթներ է հնարում, բայց երբ երևակայութիւնը ստութեան սահմանին է մօտենում՝ զրկում է ձիրք լինելու յատկութիւնից և դառնում է սոսկ սուտ, որ միատեսակ տաելի է և վնասակար թէ կեանքում և թէ գրականութեան մէջ։ Մասնաւորելով մեր խօսքերը Ա.Հարոննեանի մասին, պէտք է տաենք, որ նա հայկական կոտորածներն է նիւթ վերցնում իւր գրուածների համար կամ կոտորածների արհաւիրքից փախած գաղթականի կեանքը։ Նկարագրութեան շրջանը այնքան լալն է և իրական փաստերը այնքան զօրեղ են, որ իսկական երևոլիթները և խոր զգացուած պատկերները հենց իրանց մերկ իրականութեամբ էլ մեծ տպաւորութիւն պէտք է գործեն։ Այս այսպէս լինելուց լետոյ տաղանդաւոր վիպասանը առանց անընական ձևերի և չափազանցութիւնների դիմելու էլ հրաշալի երկեր կարող է ստեղծագործել։ Կարեք չկար, որ հայի «քիրվա» քիւրդը սպանէր իւր քիրվալին, որ քրդի համար նուիրական բարեկամութիւն է, որ քրդերը կենդանի երեխաներին ցորենի հորերի մէջ ածէին և ոտներով էլ տրորէին ցորենը և ալլն և տլլն։ Եթէ քրդի ոտի տակը կընկնէին՝ նա ոչ միայն կտրորէր, այլ ասպատակութեան ժամանակ՝ թրով վիզն էլ կկտրէր, բայց որ քուրդը պարապած լինէր հորերը լցնելու կենդանի մարդկանցով սա բոլորովին տիպական փաստ չէ քրդի կեանքից։ Նկարագրութեան ալս եղանակը գրուածքը դարձնում է շինովի, հեղինակի զգացմունքները գըլ-իւից թելագրած են երևում և ոչ սրտից բղխած, պատկերները ջղալին են և ոչ զգացուած։ Այս երևոլիթների պատճառը նա է, որ Ա.Հարոննեանը աւելի շատ է գրել միւնոյն նիւթի մասին քան թէ նրան թոլլ է տալիս նրա իրօք ունեցած դիտողութեան պաշարը և այս ե-

բեռլիթների շըջանում նա ալլ ևս ստեղծագործել չի կարող և աւելորդ էլ է որովհետեւ նա արդէն սկսել է կրկնութիւնների մէջ ընկնել:

Առաջին հատորի մէջ կալ «Մաշիդ» անունով մի գիւցազներգութիւն, որի հերոս Մաշիդը Աբովեանի Աղասու թոլլ նմանողութեամբ մի հերոս է, որ սակայն սիրահարուած է քիւրդ նադօ աղալի Զարէ աղջկալ հետ։ Զարէն էլ հարկէ սիրահարուում է վերջնականապէս Մաշիդի վրայ, երբոր սա կարողանում է գնդակով զարկել դագանակի վրայ դրած նշանին։ Զնայելով Զարէի շատ խելացի առաջարկութեանը՝ միասին փախչել ալդ երկրից, որովհետեւ ալլ կերպ քիւրդ բէգի աղջիկը չի կարող հայ գիւցացու կինը լինել գիւցազն Մաշիդը չի համաձայնում թողնել հալրենի գիւղը վտանգաւոր ժամանակ առանց պաշապանութեան և մնում է։ Շուտով նադօ աղան միացած Ամին աղալի հետ աւելուում են Մաշիդի հայրենի Բանօն գիւղը, իսկ Մաշիդը շատ քաջագործութիւններից լետու գերի է ընկնում և բանտարկւում է նադօ աղալի գոմում։ Ի՞նչ խօսք, որ Զարէն գիշերը տանում է Մաշիդի ոտներին դրած «բխովի» բանալին և նրան միջոց է տալիս փախչելու, իսկ Մաշիդը իւր նախկին ընկեր Աւոյի հետ ահագին կոտորածներ է անում և չնայելով, որ սպանում է նոյն իսկ Զարէի հօրը նադօ աղալին, բայց Զարէն՝ իմանալով Մաշիդի պաշարուած գրութիւնը լանկարծ յալտնում է նրա կողքին, երբար Մաշիդը համարեամենակ սուրբ Աստուածածնի բլրի վերայից կոռւելիս է լինում քրդերի ահագին հրոսակի դէմ։ Այս անգամ հակառակ Ահարոննեանի սովորութեան նա լաղթանակը տալիս է հերոսին, որ գիծ մանիշակի ցուցմամբ գըտնում է մի գաղտնի ճանապարհ բլրից դէպի գետը և Մաշիդը իւր Զարէի հետ ալդ ճանապարհով ազատւում են քրդերի ձեռքից։ Ահա ձեզ մի ծես ոչ տաօնա, որ ազատում է Մաշիդին անխուսափելի կորստից։ Ալսպէս է հարկաւոր հեղինակին և նա գետնի տակից հանում է գիծ Մանուշակին, որ նա գաղտնի ճանապարհը ցոյց տայ հերոսին։ Հետաքրքրականը այս պատմութեան մէջ քրդերի գաղանութիւնների նկարագիրն է, որ ա-

մեն տեղ կրկնուում է։ Ալս նկարագիրն էլ իւր անբնականութեամբ և անհաւանականութեամբ մանկական երևակալութեան տպաւորութիւն է թողնում։

Բանօն գիւղը կողոպաեյուց և հրդեհելուց յետոյ քիւրդերը սկսում են դիտկները կենդանի մնացածների հետ միասին ածել ցորենի հորերի մէջ։ Աշա հեղինակի խսկական նկարագիրը։ «Եւ տհա գլորում են մի հորի մէջ 10—15 մանուկներ, կտնայք իրար վրայ, զուհերը իրար կպած կախւում են հորերի բերաններից վթոլ, անզօր թեւերով՝ աշխատելով չընկնել փոսերի մէջ, փրկուել. կախւում են գահիճների փէշերից, ձեռներից, բռնում են նրանց մերկ սրերի ծալրերից կըտըրատելով իրանց մատները, Նրացանների կոթերը և արերի հարուածները նրանց գլորում են իրար վրայ և շշուտով մի քանի հոգի շտապ շտապ հողը թափում են նրանց վրայ։ Հողի տակից երբեմներեմն այստեղից շայնտեղից դուրս են ցցւում մի երկու գլուխ, մի քանի ոտք կամ կծկուած բռնուցքներ, տակից լսում են շանտանելի ձայներ, և հողի շերտերը վերևուց հաստանում են ու հաստանում, իսկ նրա տակում կենդանի մեռածները կրծոտում են իրար, ծամում, պատուատում շիրանց սեփական մարմինը, ոլորում են հողի և ացրեան շաղախի մէջ, սոսկալի խուլ հոնդիւններ արձակում, որից մարդուս մազերն են դիզանում գլխին։ Հողի շերտը դրսից տեղատեղ բարձր ու ցածր է լինում. շաւելի լեր գտնուուղ թշուառներն են, որոնք գերմարդակալին ճիգ են բանեցնում բարձրանալ, գահիճները զգուշ են, նրանք հսկում են, շտապով կոխկոտում են ոտներով, արորում են հաստացնում հողի շերտերը, բայց և այնպէս ստորերկրեալ նվկոցները, մահամերձ նուազած հառաջանքները շարունակում են լսուել ու լրացնել։ —Մեզ թւում է, որ հայկական կոտորածների սարսափը նկարագրելու համար բոլորովին կարեք չկար ցորենի հօրերի օգնութեան դիմելու։ Ալս դէպքում Արոնեանը քրգերից էլ հարծում ենք աւելի խստասիրտ է գտնուում և հազը թէ մի որ և է կոտորածի ժամանակ այս տեսարանը տեղի ունեցած լինի։

Սպանութիւնը ինքն ըստ ինքեան կարծում ենք

բաւական մեծ լանցանք է և զալլովիթ զարթեցնող գործողութիւն, որպէս զի կոտորածի պատկերը ալսպիսի կոպիտ և անգեղարուեստ նկարագրութեան քողով ներկելու կարիք լինի: Մի քանի ուրիշ գրուածների մէջ էլ ցորենի հորերը հանգէս են գալիս:

Առաջին հատորի մէջ, որ «Պատկերներ» վերնագիրն է կրում, աւելի կենդանի, աւելի բնական և աւելի պարզ պատկերներն են «Աքաղաղը», «Քաղաց-Վուրդունի», «Պուտ մը կաթ», «Փշուր ըմ խաց» «Բաշօն», — հեղինակի գրուածների երկրորդ հատորը կրում է «խեղճերը» վերնագիրը և պարունակում է հինգ պատկեր: Սրանցից «Դարձը», «Խաւարես լուսին» և «Դարաւոր կաղնին» իրական կեանքի պատկերների նկարագրութիւններ են խոր զգացմունքով գրած և տպաւորութիւն են գործում ընթերցողի վրայ:

Այս մելոդրամների մէջ էլ չափազանցութիւններ կան, բայց ոչ այն չափով, որ երեխայական ֆանտազիաի արդիւնք լինին: Օրինսկի համար չորրորդ պատկերի մէջ մի այլապիսի կաղնի է նկարագրուած, որ ոչ մի դար, ալլ մի քանի դար կեանք ունեցող կաղնին էլ հազիւ թէ ալդ մեծութիւնը ունենայ: Այս Մելիքենց կաղնին իւր «լայնատարած հովանու տակ ծածկում էր և տունը և գոմը և սրահը ամբողջապէս» ասում է հեղինակը: Մի գիւղական գոմ և սրահ ծածկելու համար՝ մի կաղնին այսուամենայնիւ փոքր կլինի: «Աև օրեր» պատմուածքը արդէն հէքիաթ է, որի հերոսուհին-Մարօն գեղեցկութեան մի հրաշք է, որի համար նրա սիրահար Մուսօն ամիսներով թափառում է քըրդերի օբաները նրան գտնելու համար և իւր երգեցողութեան շնորհիւ վերջապէս գտնում է նրան քիւրդ չիւսնի բէգի օբայում, նրան գիշերը սպանում է և ազատում Մարօլին, բայց վրէժինդիր քըրդերի ձեռքից նրանք չեն կարողանում ազատուել: Դաւաճան Սըքէն, որ Մարօլի փախցնելու էլ պատճառ էր դարձել, մատնում է նրանց տեղը՝ և սպանուած բէգի եղբայրները և մարդիկը կոտորում են Մարօլի սիրական Մուսօլին և ընկերներին, իսկ Մարօն ընկնում է ծովը: Դաւաճան Սըքէն էլ ինքն իրան գցում է նոյն ծովը, որովհետև

ալդտեղ էր ժայռի մէջ ալն ալրը, ուր ապաստանած էին Մուսոն իւր գիւղացիներով, իսկ նա արդէն նրանց մատնեց և կոտորել տուեց: «Մալրերը մի փոքր երկարեցրած բայց գեղեցիկ պատկեր է նոյնպէս տաճկական կոտորածներից: Սու սանի որդին Սաքոն վաղուց է, որ գնացել է տանից և մի քանի գտրուն սպասում է Մուսանը իւր արծիւ Սաքոյին, բայց նա չկար: Մալրը ամեն օր Տիրամօր պատկերի տռաջ ժամերով լալիս էր և աղօթում: Երկար տարիներ գժեսողդ մալրը սպասում էր և մի օր բուրդ գզող մարդուց լսում է մի երդ, որ յօրինուած է լինում քաջ Սաքոյի մահուան առիթով: Սաքոն այն բազմաթիւ հայ քաջերից էր, որոնք զոհ գնացին տաճկական գազանութիւններին, բայց քաջաբար մեռան գաղափարի համար: Որդու մահը Մուսանին ծալրահեղ յուսահատութեան հասցրեց և նա ստրջացած իւր անզօր ազօխքների համար՝ մերժում է քահանալին և մինչև անգամ հաղորդուել չի կամենում հիւանդ ժամանակ: Բայց երբոր քահանան ցոյց է տալիս Տիրամօր պատկերը իւր խաչուած որդու առաջ՝ Մուսանը հասկանում է, որ նրա որդին էլ մարդկութեան համար էր զոհուել, որպէս և իւր որդի Սաքոն իւր երկրի վրայ: «Մալրերը» մի շատ գեղեցիկ պատմուածք է, ուր ֆանտազիան չի անցնում բանականութեան սահմանից և գաղափարի կողմից վերին աստիճանի համակրելի պատմութիւն է, բայց երկարեցրած է, կրկնութիւններով լի, որ նոյնպէս խանգարում է սիւժետի կողմից այս գեղեցիկ պատկերի տպաւորութիւնը: Նոյնպէս օտարուածի է հայ գիւղացի կնոջ յուսահատութիւնը մինչև հաղորդութիւն չընդունելը կամ թե՛րահաւատութեան հասնելը:

Վերջացնելով՝ մեր նկատողութիւնները Ահարոնեանի մասին՝ հարկաւոր ենք համարում ասել, որ նրա գրուածքների մէջ ըէալիզմ իբրև կեանքի ճշգրիտ նկարագրութիւն շատ քիչ կայ, անձնաւորութիւնների անհատականութիւն կամ ընդհանուր տիպեր և բնաւորութիւններ նոյնպէս բացակալում են, նրա երևակալութիւնը չէ ենթարկուած կամքի և գատողութեան կօնտրոլին, նա աւելի սեփհական զգացմունքներ է պատկե-

բացնում քան թէ կեանքը, նրա հերոսները շատ ընդհանուր գծերով նկարագրուած անձնաւորութիւններ են, նրա Զարէն միւսնոյն Մարօն է, Ռաշիդը — Մուսօն է, Մարգարիտը — Սուսանն է և Ծովինարն է, Մելիք-Քեաչալը — Տէր Մարուքն է և ալին և ալին: Ահարոննեանի բոլոր գեղեցկուհիները շուշանի են նման և երեսները կլոր է, նրա բոլոր հերոսները մի ոճով են խօսում, նրա գիւղերը բոլորը միատեսակ, երկերի ընդհանուր սիւժէտները միակողմանի և լալկան, որ առաջանում է նիւթի միակողմանի լուսաբանելուց: Եթէ նա չաշխատի հետաքրքրուելու կեանքի էական պայմանները և անձնաւորութիւնների անհատական յատկութիւնները ուսումնասիրելու, նրա երեակալութիւնը նրան անդունդ կտանի և նա անպատճառ ջրալի կդառնայ, որովհետեւ երեակալութիւնը որքան էլ մեծ շնորհ լինի բանաստեղծի համար՝ նա չի կտրող փոխարինել լուրջ գիտողութեան և ուսումնասիրութեան: Գալով Ահարոննեանի արժանիքներին, պէտք է ասել, որ նա վառ երեակալութիւն ունի, որ սակայն դատողութեան և խելքի հսկողութեան կարօտ է, նրա գաղափարները համակըրելի են և զգացմունքները մաքուր, իսկ լեզուն մեղեղի պէս գուրեկան, շատ սահուն, կոկ, աւելի սուբյեկտիւ քան վիպական, բայց ոչ պատկերաւոր, ոչ զօրեղ և ոչ արտայալտիչ:

Մենք գիտութեամբ շեշտում ենք հեղինակի թերութիւնները, որովհետեւ շատ ենք գնահատում նրա տաղանդը և ցանկանում ենք, որ օր առաջ զգուշանալ իւր Փանտազիայի որոգալթներից: Վանտազիան այնպիսի մի թանկագին ձիրք է բանաստեղծի համար, որ նրան շուայլելը լանցանք է և պէտք է Փանտազիան սահմանափակել լուրջ գիտողութիւնների միջոցաւ, եթէ ոչ նա կորստաբեր կլինի բանաստեղծի համար: Ահարոննեանը ապագայ կարող է ունենալ, եթէ լրջօրէն վերաբերուի իւր գրածներին և աշխատի չդառնալ հէքեաթչի: